

տիրապետութիւնը՝ որ կը բաժնէ մեր հինը միջին դարէն, դժուարաւ թոյլ պիտի տայ՝ երկրորդով գուշակել առաջինը, Արշակունեաց շրջանը, որ յոյն ազդեցութեան ենթարկուած էր: Եւ մեք պիտի մաղթենք ասոր ալ Անույ բախտը: Բայց եւ Բագրատունեաց գործն հաւասարապէս պատուական է մեզ, ու մասն մեր ազգային հին կենաց, եւ ես պիտի համառօտեմ հոս՝ ինչ որ կը պատկանի մեր նիւթին:

«Կան, կ'ըսէ տեղեկատուն, կաւեղէնների ամէն տեսակները, սովորական կաւեղէններից մինչեւ շքեղ յախճապակին» (Արրտ. 660): «Հասարակ կաւէ ամանների մէջ առանձին հետաքրքրական են զարդարուն մեծ կարասները, նկարէն գօտիներով, որոնք ներկայացնում են երկրաչափական գծեր կամ կենցաղական տեսարաններ:.. Զարմանալի են յախճապակեայ ամաններն իրանց թափանցիկ կողերով եւ ուռուցիկ ու խոր գծած նկարներով. եւ ձենապակից ամաններն՝ իրանց հարուստ եւ բազմազան ոսկեզօծ ու բազմերանգ նրկարներով...: Բեկորներից երեւում է՝ որ ստոմանների մեծագոյն մասը թափովի է, եւ աչքի են ընկնում թափման—որ հինգ տեսակից աւելի է— բարձր կատարելութեամբ, նոյնպէս եւ գեղարուեստօրէն կա-